ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- դեկտեմբերի 2026 թվականի № ---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի №426-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության 2026 թվականի նոյեմբերի 12-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. 10 ամիս ժամկետով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի ««Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը «Նոր Հաճըն» փոքր հիդրոէլեկտրակայանում բացառապես սեփական կարիքների համար էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №426-Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0757 լիցենզիայով ամրագրված «Նոր Հաճըն» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը (լիցենզիայի գործողության ժամկետը)՝ որոշման մեջ «մինչև 2026 թվականի դեկտեմբերի 14-ը» բառերը փոխարինելով «մինչև 2027 թվականի հոկտեմբերի 14-ը» բառերով:

2. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ԼԷ №0757 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Նոր Հաճըն» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2023 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 01-716 գրությամբ տրամադրված թիվ 2341988129 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ գումարից 275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) հաշվի առնելով այն, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2023 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 01-716 գրությամբ տրամադրված թիվ 2341988129 բանկային երաշխիքի ժամկետը գործում է մինչև 2027 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ, ուստի քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել ևս 275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ գումարի երաշխիք կամ 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) դրամ գումարի նոր երաշխիք առնվազն մինչև 2027 թվականի նոյեմբերի 28-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի դեկտեմբերի 3-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- դեկտեմբերի 2026թ.